ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 04

Հայաստանի Հնարապետության Արագածոտնի մարզպետարանում **19.06.2012թ.** տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Ս.Սահակյան ՀՀ Արագածոտնի մարզպետ
Ա.Արսենյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Մ.Առաքելյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Հ.Գևորգյան ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Հ.Օհանյան ՀՀ ՏԿՆ ներկայացուցիչ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ՀՀ Արագածոտնի մարզի 2012 թվականի ամփոփ հողային հաշվեկշռի հաստատման աշխատանքների կազմակերպման մասին/ զեկ. Մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Գ. ՕՀԱՆՅԱՆ /:

2. <Ֆինանսական համահարթեցման մասին> ՀՀ օրենքով սահմանված կարգով ֆինանսական համահարթեցման դոտացիաների 2013 թվականի գումարների հաշվարկներում օգտագործվող հողի հարկի և գույքահարկի գծով հաշվարկային ցուցանիշների մասին / զեկ. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ/:

3. ՀՀ Արագածոտնի մարզում բազմամյա տնկարկների տարածքների հաշվառման մասին / զեկ. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Յու. ԱԶԱՏՅԱՆ/:

4. ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման և նախորդ տարիներին գոյացած աշխատավարձի և սոցվճարների պարտքերի մարման գործընթացի մասին/ զեկ. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ /:

Այլ հարցեր և հայտարարություններ:

Կից՝զեկուցողների զեկուցագրերը:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

--- Մարզպետը ներկայացրեց մի քանի հիմնախնդիրներ, որոնք ներգրավված են առաջիկա ծրագրերում:Նա ասաց, որ մարզում սկսվում է իրագործվել կառավարության կողմից իրականացվող երրորդ հրատապ ծրագիրը: Այդ շրջանակում ներգրավված են մի շարք համայնքներ, որտեղ կկատարվեն դպրոցների, մշակույթի տների վերանորոգման, ինչպես նաեւ գազիֆիկացան աշխատանքներ:
Նա խոսեց նաեւ ոռոգման ջրի մասին, նշելով, որ այս տարի անհամեմատ սակավ է ջրամբարներում կուտակված ջուրը: Այս առումով տարին աննախադեպ է, եւ Սեւանա լճից ոռոգման նպատակով ջուր է ստացվում արդեն մայիսի 4-ից սկսած: Ոռոգման խնդիրը մեղմելու նպատակով կազմվելու է ժամանակացույց, որպեսզի Արզնի-Շամիրամ ջրանցքի վերջնամասում գտնվող համայնքները չտուժեն սակավաջրության պատճառով:
Մարզպետը համայնքապետերին տեղեկացրեց նաեւ, որ այս տարի եւս գյուղացիական տնտեսությունները կարող են օգտվել կառավարության կողմից տրվող աշնանացան ցորենի, դիզվառելիքի եւ պարարտանյութի հատկացումներից: Անդրադարձ եղավ նաեւ գյուղատնտեսական արտադրանքի մթերումների գործընթացի կազմակերպմանը, ինչպես նաեւ հունիսի 25-27-ը կայանալիք զորահավաքային զորավարժանքների անցկացմանը:
Նիստի օրակարգին համապատասխան, քննարկվեցին նաեւ մարզի 2012 թվականի ամփոփ հողային հաշվեկշռի հաստատման աշխատանքների կազմակերպման, համահարթեցման դոտացիաների 2013 թվականի գումարների հաշվարկներում օգտագործվող հողի հարկի եւ գույքահարկի գծով հաշվարկային ցուցանիշերի, բազմամյա տնկարկների տարածքների հաշվառման մասին հարցերը:
Առանձնակի անդրադարձ եղավ մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման եւ նախորդ տարիներին գոյացած աշխատավարձի ու սոցվճարների պարտքերի մարման գործընթացին: Այս կապակցությամբ մարզպետը հանձնարարեց առավելագույն պատասխանատվություն եւ հետեւողականություն դրսեւորել այս կարեւորագույն խնդրի նկատմամբ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

1.**Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Պ.Նազարյան**

--- <<Մաքուր ջուր և էներգիա>> ծրագրի շրջանակներում համայնքներում իրականացվող աշխատանքների համագործակցության վերաբերյալ:

2.<<Թալինի տարածաշրջանի կանանց ռեսուրս>> կենտրոնի տնօրեն Գայանե Խաչատրյան

--- Հաշմանդամ երեխաների բուժումը Երևանի մասնագիտացված կենտրոններում կազմակերպելու համագործակցության վերաբերյալ:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ